Unitar Online Catalogue

«Ներածություն կանաչ տնտեսությանը» էլ.դասընթաց

	Course
	Web-based
	2 Days
	Environment, , Climate Change
	http://www.unccelearn.org
	US$0.00
email	uncclearn@unitar.org
(PAGE)	Partnership for Action on Green Economy

Այս դասընթացն իրենից ներկայացնում է ուղևորություն, որի ընթացքում մենք կծանոթանանք ներառական կանաչ տնտեսության հիմնական հասկացություններին, քաղաքականության գործիքներին և միջազգային շրջանակներին: Մեր ուղին բաղկացած է հինգ մոդուլներից, որոնք բաժանված են ավելի փոքր բաժինների: Կարող եք սկսել ցանկացած մոդուլից՝ ըստ ձեր նախընտրության:

Որևէ դժվարությանը բախվելու կամ հարցեր ունենալու դեպքում տեղեկացեքօգնության էջից (անգլերեն):

Դասընթացը մշակվել է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակությունը նպատակ
չունի արտացոլելու Եվրամիության դիրքորոշումը:

□□□□

Դասընթացն ավարտելուց հետո մասնակիցները կկարողանան.

- Նկարագրել ներառական կանաչ տնտեսության իրագործման հիմքում ընկած գաղափարը և հիմնական հասկացությունները և տարբերությունը ավանդական գործելաոճերի համեմատ
- Բացահայտել ազգային տնտեսությունների կանաչ անցման հնարավորությունները
- Բնութագրել առանցքային ոլորտների հիմնական հնարավորություններն ու մարտահրավերները
- Ներկայացնել ազգային ռազմավարության և ներառական կանաչ տնտեսության առաջխաղացման պլանավորման օրինակներ
- Տարբերակել ներառական կանաչ տնտեսությանն աջակցող միջազգային շրջանակներն ու նախաձեռնությունները

□□

Բոլոր հարցաշարերը հաջողությամբ ավարտելուց հետո կստանաք ավարտական սերտիֆիկատ: Հինգ մոդուլներից յուրաքանչյուրում ներկայացված է հարցաշար: Հարցաշարի անցողիկ գնահատականն է՝ 70% կամ ավելի բարձր: Յուրաքանչյուր հարցաշարի համար կունենաք երեք փորձի հնարավորություն: Ձեր հավաստագիրն ինքնաբերաբար հասանելի է լինելու ներբեռնման համար դասընթացի էջի ստորին հատվածում՝ «Հավաստագրում» բաժնում: